ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՁԱԴՐԱՆՔ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի պոտենցիալ մասնաճյուղի համար նախագծային փաստաթղթեր կազմելու վերաբերյալ

1. Մասնաճյուղի տարածքի համար ներկայացվող պահանջները:

Ներկայացնել էսքիզային և աշխատանքային նախագիծ 250 մ^2 տարածքի (այսուհետ՝Օբյեկտ) շինարարական/վերանորոգման (այսուհետ՝Աշխատանքներ) համար: Նախագիծը պետք է ներառի.

- Ճարտարապետական մաս, կոնստրուկտորական և շինարարական մաս
- Էլեկտրաֆիկացում[1]
- Ջեռուցում և Օդափոխություն
- Ծավալաթերթ
- Մասնագրեր
- Օբյեկտում նախատեսված կահույքի գաբարիտային թույլատրելի չափսեր, հարկի, կահավորման հատակագծեր աշխատասեղանների տեղաբաշխմամբ ըստ մարդկանց քանակի
- Շինարարական աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ նախագիծ, կտրվածքներով և DWG ֆորմատով: Աշխատանքների կատարման օրացուցային ժամանակացույց:
- Հարկի, կահավորման հատակագծեր աշխատասեղանների տեղաբաշխման ըստ մարդկանց քանակի
- Շինարարության ավարտում տրամադրել AS-Built նախագիծ:

- Ներկայացնել ճշգրիտ ծավալաթերթեր նախագծված Աշխատանքների համար: Ընդ որում՝ դրանք պետք է կազմվեն ըստ գործառնությունների:

- Կազմել և ներկայացնել շինարարական Օբյեկտի համար անհրաժեշտ շինարարական-մոնտաժային աշխատանքերն իրականացնող կազմակերպությանը/ներին/շինարարական աշխատանքների կազմակերպման պլանը:

- Համաձայնեցնել շինարարական Օբյեկտի համար անհրաժեշտ սարքավորումների, սարքերի մասնագրերը «Ամերիաբանկ» ՓԲԸ կամ վերջինիս կողմից լիազորված անձանց հետ:

Հաճախակի այցելություններ շինհրապարակ համագործակցելով շինարարի հետ առաջացած խնդիրները լուծելու համար:

Իրականացնել հեղինակային հսկողություն՝ Աշխատանքների կատարման ընթացքում:

Բանկի համար նախատեսված տարածքներ

---

[1] *Հեռախոսային և ներքին տեղեկատվական ցանցի, ինչպես նաև անվտանգության համակարգերի նախագծերն ու հատակագծերն իրականացվում են Պատվիրատուի կողմից:*

1.1.1. Ընդհանուր տեղեկություններ.

1.1.1.1. Մասնաճյուղի գտնվում է հասարակական 1 հարկանի շենքում:
1.1.1.2. Սույն նկարագրությունը կազմված է ԿԲ-ի պահանջների, բանկային տարածքներին ներկայացվող շինարարական չափորոշիչների, ինչպես նաև ղեկավարների հետ քննարկումների և նրանցից ստացված առաջարկների հիման վրա: Սույն պահանջները կարող են հիմք ծառայել բանկային տարածքների նախագծման փորձ ունեցող մասնագետների կողմից մանրամասն տեխնիկական առաջադրանք կազմելու համար:
1.1.1.3. Ըստ կադրային պլանի բանկի աշխատակիցների թիվը նոր մասնաճյուղում կկազմի 21 հոգի (մանրամասն ցանկը բերված է ստորև): Փաստացի աշխատատեղերի թիվը մասնաճյուղի տարածքում կազմելու է 21 աշխատակցի համար:
1.1.1.4. Շենքի նախագծման ընթացքում պետք է հաշվի առնել բանկային տարածքների տեխնիկական հագեցմանը և նախագծմանը ներկայացվող ՀՀ ԿԲ-ի պահանջները:
Պետք է հաշվի առնել նաև բնական և արհեստական օդափոխության ընդհանուր համակարգը, ջեռուցման և օդորակման, ինչպես նաև տեխնիկական հանգույցի (սենյակի) համար, համակարգեր:

1.1.1.5. Տարածքի մակերեսն է 250մ^2 :

1.1.2. Տարածքի նախագծման հիմնական պահանջները.

1.1.2.1. Նախատեսվում է բանկի համապատասխան բաժինները տեղակայել ըստ նրանց գործունեության, աշխատանքային գործընթացների փոխկապակցվածության, ինչպես նաև հաճախորդների, հյուրերի և աշխատակազմի հասանելիության (ազատ /սահմանափակ /արգելված մուտք) չափանիշներով:
1.1.2.2. Ստորև ներկայացվող բաշխումը պայմանական է, առավել կարևոր է գործառնական ստորաբաժանումների և տարածքների գոտիավորումն անվտանգության տեսանկյունից:

1.1.3. Տարածքում նախատեսվում է.

1.1.3.1. Սերվերային հանգույց (սենյակի)՝մոտ 7 մ^2 (արգելված մուտք):
1.1.3.2. Խոհանոց մոտ 20քմ.:
1.1.3.3. Դրամապահոց (2.5 մ^2 մակերեսով, արգելված մուտք, ելքով դեպի բանկի դրամարկղային հանգույց): Դրամապահոցը պետք է ունենա ըստ GOUS Ռ 51072 բանկային պաշտպանիչ դռնով մեկ մուտք դեպի դրամարկղային հանգույց: Դրամապահոցի տեղադրումը արտաքին պատերին կից չի թույլատրվում: Դիտողական միջանցքների առկայությունը բոլոր դեպքերում պարտադիր է: Նախադրամապահոցը պետք է ունենա մեկ մուտք: Գործառնական դահլիճ՝ հաճախորդների դրամարկղային սպասարկմամբ (4 գանձապահի աշխատատեղ), հաճախորդների սպասարկման մենեջերների (3 աշխատատեղ՝ ևս մեկ աշխատատեղի ավելացման հնարավորությամբ) աշխատատեղ հաճախորդների (հաճախորդների գոտի՝ ազատ մուտք) համար տարածքով: Գործառնական դահլիճի հայեցակարգը հնարավորություն է տալիս առանձնացնել մանրածախ և կորպորատիվ հաճախորդներին (ֆիզիկական և իրավաբանական անձինք), և մեծ քանակությամբ կանխիկ դրամով հաճախորդների համար (1 խոշոր գումարի գանձապահի աշխատատեղ): Դրամարկղային սպասարկման տարածքը պետք է հարակից լինի դրամարկղային հանգույցի հետ:
1.1.3.4. Տարածք 3 վարկային մասնագետների համար, աշխատասեղանները սրահում:
1.1.3.5. Դրամարկղային հանգույց (արգելված մուտք): Անհրաժեշտ է նախատեսել առանձին դրամարկղային հանգույց արգելված մուտքով և ապահովել դրամապահոց հարակից դիրքը դրամարկղային հանգույցի հետ:
1.1.3.6. Կառավարիչի սենյակը նախատեսել այնպես, որպեսզի սպասարկման սրահը տեսանելի լինի կառավարչին:
1.1.3.7. Անվտանգության աշխատակցի սենյակ:
1.1.3.8. Նախատեսել պահնորդի տեղ:

1.1.4. Տարածքի նախասրահում նախատեսվում է.

1.1.4.1. Մեկ բանկոմատ և տերմինալ բանկի գլխավոր մուտքի մոտ:

Աշխատատեղերի թիվն ըստ գոտիավորման.

	ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	Քանակ	Տեղ
	Մասնաճյուղի կառավարիչ	**1**	առանձին սենյակ
	ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ		
	Հաճախորդների սպասարկման մենեջեր	**5**	նախատեսված է 4 սեղան սրահում
	Տեղեկատու	**2**	մեկ սեղանի մոտ պետք է ունենանք 2 աշխատատեղ
	Վարկային մասնագետ	**3**	նախատեսված է 3 սեղան սրահում
	Հաճախորդների սպասարկման բաժնի ղեկավար	**1**	1 սեղան
	ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ		
	Մասնագետ-գանձապահ(ներառյալ խոշոր կասսա)	**5 +1** խոշոր կասա	գանձապահների զոնա 4 աշխատասեղան + 1 խոշոր կասսայի սեղան
	Գործառնական բաժնի ղեկավար	**1**	**1 սեղան**
	Պրեմիում	**1**	**1 սեղան**
	ՕԺԱՆԴԱԿՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		
	Անվտանգություն	**1**	առանձին սենյակ
	ԸՆԴԱՄԵՆԸ	21	**19**